

Կազմակերպվում է մրցույթ

Անտառօգտագործման տեսակը, ժամկետը, վայրը.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ծաղկաձորի անտառապետության տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության հողերում հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով անտառային նշանակության հողերից 0,1 հա տարածք (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0283) (գործառնական նշանակությունն անտառային բացատ է) մինչև 60 տարի ժամկետով հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով վարձակալության իրավունքով տրամադրելու համար: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Մրցույթի կազմակերպչի անվանումը, մրցույթի կազմակերպման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, վայրը (հասցեն).

Մրցույթը կազմակերպում է բնապահպանության նախարարության անտառային կոմիտեն 2018-ի հոկտեմբերի 10-ին: Մրցույթի անցկացման վայրն է ք. Երևան, Արմենակյան 129, 3-րդ հարկ, Անտառային կոմիտե (հեռ.՝ հանձնաժողովի քարտուղար 077 78 05 78 Գ. Թադևոսյան):

Մրցույթին մասնակցության հայտերի ընդունման ժամկետը (ժամերն ըստ օրերի).

Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են 2018 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 20-ը (աշխատանքային օրերին ժամը 10⁰⁰-ից 16⁰⁰):

Վարձավճարի չափը.

Վարձավճարի չափը տարեկան կազմում է 77,100 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Մրցույթին մասնակցության նախավճարի չափը

Մրցույթին մասնակցության նախավճարի չափը կազմում է 3855 ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարը.

Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարն է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեհամարը՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Մյասնիկյան մասնաճյուղ, 163038001166

Մասնակիցների կողմից անտառի տարածքին ծանոթանալու օրերը և ժամերը.

Մրցույթի մասնակիցները կարող են տարածքին ծանոթանալ 2018 թվականի սեպտեմբերի 19-ին ժամը 12⁰⁰-ին:

Մրցույթին մասնակցության հայտին կից պահանջվող փաստաթղթերի ցանկը.

Մրցույթին մասնակցության հայտին կից ներկայացվում են՝

- 1) Մրցույթի մասնակցության հայտ (ձև 2, կցվում է).
- 2) հայտը (ծրարը) ներկայացնելու ժամկետ է համարվում հանձնաժողովի կողմից այն ստանալու օրը և ժամը, որի մասին գրառում է կատարվում հայտի (ծրարի) վրա.
- 3) անտառօգտագործման ծրագիր.
- 4) նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթի պատճենը.
- 5) իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար՝ համապատասխանաբար պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.
- 6) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը.
- 7) հայտատուի կողմից տրված լիազորագիրը, եթե մրցույթին ներկայանում է նրա լիազորած անձը:

Մրցույթի պայմանները, մրցույթի հաղթողին որոշելու կարգը.

Հանձնաժողովի անդամները մրցույթին մասնակցող հայտատուների կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագիրը գնահատում են համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման 1-10 բալանոց միավորների համակարգով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի ներկայացրած հայտի գնահատված միավորների հանրագումարն առավելագույնն է մնացած մասնակիցների միավորների հանրագումարից, բայց ոչ պակաս հանձնաժողովի անդամների կողմից գնահատվելիք առավելագույն միավորների հանրագումարի կեսից:

Հավասար միավորների դեպքում հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

Մրցույթի հայտերը ներկայացնելու վայրը.

Մրցույթի հայտերը ներկայացվում են քաղաք Երևան, Արմենակյան 129, Անտառային կոմիտե:

Հայտերի բացման և դրանց ամփոփման նիստերի կայացման օրը և ժամը.

Հայտերը բացվելու և ամփոփվելու են 2018 թվականի սեպտեմբերի 24-ին ժամը 11⁰⁰-ին: